


Ն. ԲՈՒԼՍՏՈՎ, Լ. ԿԱՍՍԻԼ, Պ. ԼՈՊԱՏԻՆ

5354



Զ Ը Ն Գ-Զ Ը Ն Գ Ի
Յ Ե Ր Կ Ր Ո Ւ Մ

ՊԵՏՐՈՍ

1937

ՅԵՐԵՎԱՆ

5332

ԲՈՒԼԱՏՈՎ, Լ. ԿԱՍՍԻԼ, Պ. ԼՈՊԱՏԻՆ

087.1: 6

ԶԸՆԳ-ԶԸՆԳԻ ՅԵՐԿՐՈՒՄ

Թարգմ. Ն. Տ. ԱՎԱԳՅԱՆ

Լուսանկ. յեղ մոխած
Մ. ՄԱԿԱՆՈՎԻ



19732
A $\frac{\pi}{23344}$



ԳԵՏՀՐԱՏ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱԳՐԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԲՍԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1937



Յեթե դուք ուզում եք հյուր լինել քաղաքացիներ
 Կոտաշկին — Գորալի ու Ալլալի մոտ, շուտ սովորեցեք
 համարել, դե, գոնե մինչև հարյուրը: Բայց դե վճնց կա-
 րող եք դուք հաշվել, թե քանի անգամ պիտի զանգահա-
 րեք Կոտաշկիններին: Տեսնում եք ես դուռը: Գոան յե-
 տեն ասրում են Գորան ու Ալլան: Աջ կողմը կոճակ կա:
 Հիմա զանգահարեցեք:

Ահա յեկավ հարեանուհին իր տղա Շուրալի հետ:


— Ուզում եմ ինքս, —

բղավեց Շուրան:

Նա կանգնեց վտտի
 ծալրերի վրա:

Նա ձեռքը հասցրեց
 կոճակին: Ու հուպ տվեց
 մատով:







Դոան լետեր, միջանցքում բնակարաններն են, իսկույն և լեթ կկնդանացալ, զնդզնդաց զանգը՝ զընդ-զընդ-զընդ-զընդ...


Միջանցքն ավլում եր մաքրող կատչան: Նա լսեց զանգը, վազեց դեպի դուռը, և ուրախ բացականչեց՝

— Գիտեմ, գիտեմ ով ե զանգը տալիս: Դա Շուրոչկան ե զանգ տալիս: Լսում եմ քո ձեռագիրը:





Կատյան բաց արեց դուռն ու ներս
թողեց հարևանուհուն իր Շուրալի հետ:
Հետո նա գնաց իր գործին: Հան-
կարծ նա տեսավ մի սարգ: Սյդ վեց-
փոտնանի խճճագործն անց երկացրել էր
փոստալնի լարերը գանգի լարերի կող-
քին:




Կատյան թափով խոզանակը կոխեց անկյունը, և սարդը վոնջնչացավ:


Բայց բարկացած խոզանակը վոստայնի հետ միասին բռնեց նաև իսկական լարը:

Մետաղալարը դուրս թռավ զանգի պտուտակիկի տակից: Կատյան շնկատեց և դուրս գնաց: Խոզանակը մնաց: Զանգը փչացավ:



Գորա և Ալա Կոտաշկինները տուն վերադարձան:
Նրանք ցատկոտելով աստիճաններով վեր վազեցին:
Մրցավազքի — ով ալիլի շուտ կհասնի:
Ալան հասավ կոճակին առաջինը: Ալան զանգահա-
րեց աչնպես, ինչպես պետք է զանգահարել, վորպեսզի
լսեն Կոտաշկինները բնակարանում:





Ահա այսպես՝ մի անգամ ուրախ (զը՛նգ), լերկու
անգամ մտածկոտ (զը՛-ը-ը՛նգ...զը-ը-ը՛նգ...), լերեք ան-
գամ բարկացած (զը՛-ոռո, զը՛ոռո... զը՛ոռո):

— Ա՛յ, դո՛ւ, զանգ՛տալ չգիտես, — ասաց Գորան ու
սեղմեց կոճակը:





Մի անգամ ուրախ, լերկու անգամ մտածկոտ, լերեք —
բարկացած:

Չեն բաց անում:


— Յերեի զանգը կոտրվել է, — վճռեցին լերեխարեքը:

Այլան ծեծեց դուռը ծալած մատով: Գորան ափով:

Չեն բացում:



5354
ԵՐԱՅՈՒՆԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ





Յերեխաներն շտապում ելին դաս սովորելու: Ալլան
ձեծեց ափով, Գորան — բռունցքով: Բաց չեն անում:
Ալլան բռունցքով, Գորան բռունցքով: Վռչինչ:

Յերեխաները նստեցին շեմքին: Վռնց անել:

— Ինչ ե, սենք եստեղ ընդօրիշտ, մինչև մահ, կմնանք, —
հազիվ գտպելով լացը, ասաց Ալլան:

— Դե, մի թնկթնկա, խնդրում եմ, կբացե՞՛հ, — ասաց
Գորան: — Այ, ճանապարհորդ Ռորլինգոնը անբնակ կզգում
քսան տարի սպասում եր:

— Բն-ն, նա հեռավոր ճանապարհորդ եր, իսկ լես...

— Իսկ ուզում ես արի լես ու դու ել ճանապարհոր-
դենք, — առաջարկեց հանկարծ Գորան: — Ուռն: Յես մի
բան մտածեցի: Մենք կուղևորվենք զանգի լարերի վրայով:

— Յես լարերի վրայով չեմ կարող:

— Իսկ սենք իբր թե, իբր թե կդառնանք փոքրիկ-
փոքրիկ ու կբարձրանանք զանգի վրա: Յեվ ամեն բան
ենտեղ կնայենք՝ ինչպես ե նա շինված և ինչո՞ւ լե նա
կոտրվել:



— Մենք չկուղերը լենք Զանգի Գնած Աշ-
խարհը, — ուրախացավ Ալլան, — մենք կարթ-
նացնենք նրան:

Աղպես սկսվեց Ալլա ու Գորա Կոտաշկին-
ների ճանապարհորդութունը: Նրանք կարծես
թե քանի գնում փոքրանում ելին:


Նրանք դարձան բոլորովին փոքրիկ, մի
լուցկուց վոչ մեծ:


Յեվ ահա նրանք բարձրացան դեպի զանգի
կոճակը:

Հիմա նրանց թվաց, վոր կոճակը
շատ բարձր և ամրացրած: Ճանապարհորդներն ստիպված էլին բարձրանալ ալդտեղ սանդուխքով:

Նրանք հասան փայտյա վարդյակին:

Նրանք հանեցին վարդյակի պտուտակը, իսկ վարդյակի տակ կաին զսպանակիկներ: Յեվ զսպանակիկներից պատի վրայով վազում էլին լարերը:





Գորան ընկավ զսպանակիկի վրա: Սա սեղմվեց մյուսին: Նրանց միջով պիտի վազեր ելեկարական հոսանքը: Քայց զանգը լուռ եր:

Գորան սեղմեց ավելի ուժեղ:

— Վայ, վայ, վայ, կշարդես, դու իմ վտաքը հուպ ավիր, — բղավեց Ալլան: — Թող: Ավելի լավ ե ցույց տուք ինձ, վորտեղից ե առաջանում հոսանքը — և մեկ ել — ինչու զանգը կարող ե զանգահարել:


— Սպասիր: Թող մի վարդյակը զնենք տեղն ու պտուտակիկն ամրացնենք: Եսպես: Դե զնանք առաջ: Հիմա մենք կբարձրանանք լարերի վրայով բարձր-բարձր...



Լարերն ամրացված ելին մեխերի վրա: Մեխերից մեկն ամուր չեր նստած ավազի մեջ: Գորան բռնեց այն: Գորան հանեց մեխը: Մեխն այժմ գրեթե Գորաի չափ եր:

— Ահա մենք զենք եյ ունենք, — բղավեց Գորան: — Դա կլինի իմ նիզակը: Առ, բռնիր զբանից ու ցատկիր դեպի վեր: Բարձրացիր ետտեղ:

Ճանապարհորդները մի ծակ գտան պատի մեջ ու լարերի հետ միասին մտան Քնած Աշխարհը: Նրանք սողում ելին լարերի վրայով:



— Նալիր, մենք գտանք զանգիլ զլխավոր ելեկտրա-
կայանը, — բացականչեց Գորան:

Դա մի սովորական մարտկոց էր, զբաղանի լապտե-
րից պեր ըստ:

Գորան ուներ աչդպիտի մի լապտերիկ՝ չըխկ — ու
լույս էր տալիս:

— Յերեի նա վերջացել է, — վճռեց Գորան: — Չեռքով
վաշինչ չեմ գլուծ: Անբողջ ելեկտրականութունը նրա
մի ից դժւրս է լեկել, ինչ է:

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՅԵՐԵՎԱՆ
1950



~~19732~~
 A $\frac{23344}{11}$

— Մի փորձենք լեզվով, — ասաց Գորան:

Նա սկսեց խառնել իր զրպանները:

Նա հանեց մի կտորված զրչածայր, հետո պարանի կտոր, կարմիր մաախի կտոր, չոր հաց, փոքրիկ քար, հետո ել աղափու փետուր, հետո մի կտորված գզալ, թրբխկանի խցան, հաշվիչի խցան, շախմատի ձիու զլուխ և մողեսի պոչ...

Վերջապես լերկացին լերկու կտոր մետաղալար:

ՀՄՍԱ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՄՐ
 ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
 ՓՐԱԴԱՐԱՆ № 2
 ԿՎՂԴԵՄԻԱ




Յերեխաները կապեցին մետաղալարերը մարտկոցիկի թիթեղիկներին:

— Հապա: — Գորան մետաղալարերի ծայրերը կպցրեց լեզվին:

— Ոչ-ոչ-ոչ, վոնց ծակեց: Ուրեմն հոսանք կա: Կա հոսանք, ուռա:

— Բայց սպասե՛ցեք, գուցե նա շատ թույլ, սատկած հոսանք է: Ես բոպելիս կատուզենք:





Գորան հանեց գրպանի լապտերիկից վերցրած լամպիկն ու հարձարեցրեց նրան մետաղալարիկները: Հազիվ եր նա դիպցրել — և իսկուհն նրանք ստիպված ելին խփել աչքերը՝ ա՛նպես Վալատակեց լամպիկը:

Ուրեմն մարտկոցիկը գործում է: Հոսանք կա: Ամեն ինչ կարգին է:

Իսկ ի՞նչու չե՞զանգը լուռ:






— Մենք ստիպված պիտի լինենք թռչել, — ասաց Գորան, կկղեց ու թափով թռավ մարտկոցիկի վրայից, տուփ-պատյանի վրա, վորի տակ քնած էր ինքը Մեծ Զանգը: Ըլլան ել նրանից լեռ չմնաց, վշրովհետև նա ել քաջ ճանապարհորդ էր:


— Նախիր, նախիր, — ըղավեց Գորան ու ցույց տվեց անկյունը:

Մլլան վախեցած նայեց այնտեղ: Անկյունում կանգնած էր կատաղի խոզանակը: Դրա գղզղված մազերի միջից դուրս էր ցցվել լսրը (հիշում եք): Այդ լսրը դուրս էր թռել ստուռտակիկի տակից:



Գորան ամրացրեց պոկված լարն իր տեղը: Ճանա-
պարհորդները վորոշեցին տեսնել, թե ինչպես է կառուց-
ված զանգն իր ներսում:






Պետք եր հանել կափարիչը, բայց կափարիչն ամբողջված եր կեռիկներով: Կեռիկները շատ ներքև ելին, ձեռքները չեր հասնում:

Այդ ժամանակ Գորան հիշեց իր մետաղալարիկները ու պարանների մասին (ափսոս, վոր մողեսի պոչը պետք չեկավ):

— Տես, թե վոնց եմ գցում լես ողապարանը, — ասաց Գորան:


Նա գցեց պարանի ողը կեռիկից, բայց դրանից բան դուրս չեկավ: Քաջ ճանապարհորդը շատ լերկաբ չարչարվեց: Վերջապես կեռիկներն անձնատուր լեղան:

Մեկ, լերկու, լերեք... Ուռա... Կափարիչը վերցրին:



Հրաշալի տեսարան բացվեց մեր ճանապարհորդների առաջ: Նրանք տեսան կոճեր,՝ վորոնց վրա փաթաթված ելին թարակ մետաքսափայլ կանաչ լարերը: Նրանք տեսան Մեծ Զանգի կեռած զսպանակիկները, փոսկեփայլ պտուտակիկները, պնդողակիկներն ու արծաթյա գավաթիկը: Ճանապարհորդները ցատկեցին կոճերի վրա: Հարվածից դողողաց զանգի զարկանը: Ալգպես և կոշվում ծայրին մի կոշտիկ ունեցող ձողիկը: Շատ ուրախ աշխատավոր ե: Նա նման է թմբուկի փայտերին:

— Դե, սպասենք մինչև մեկը կգա ու կսեղմի դռան մտալի կոճակը,— ասաց Գորան:




Յեվ ահա վոտնաձայներ լսվեցին սանդուղքների վրա։
Քայց գանգն անընդհատ լուռ եր։ Ճանապարհորդները
տխրեցին։


— Ախրը դա նամակատարն եր, — գլխի ընկավ Ա-
լլան։ — Նա գանդ չի տալիս։ Ուղղակի նամակը գցեց արկղն
ու գնաց։

Նորից վոտնաձայներ լսվեցին։

Լսվում եր, թե ինչպես սեկի մատը քսվեց դռան յե-
տևի կոճակին։

Յեվ հանկարծ փալատակեց կայծակը։ Սարսափելի
զրբխկոցը, գոգոցը, վորոտը, զրբնգոցը խլացրին ճա-
նապարհորդներին։





Զարկանն եր՝ գնդիկով խփվում եր զանգի գավաթին։
Գավաթը լցվել եր զըրնգոցով։

Զըրնգոցի ալիքները հոսեցին ամբողջ բնակարանով
մեկ։ Ե՛ծ Զանդն արթնացավ։

Ճանապարհորդները քիչ եր մնացել իլանալին։

Բայց և այնպես նրանք ժամանակ ունեցան զիտելու
զանգի կառուցվածքը։

Ուղիղ նրանց աչքերի առաջ վազեց հոգսաշատ հոսանքը մարտկոցիկից ու հաղորդեց ճանապարհորդներին, վոր գոան վրալի կոճակի տակ զսպանակիկները միացել են, վորովհետև կոճակը սեղմում ե։ Իսկուհն և լեթ հոսանքը վազ տւեց զարկանի զսպանակիկի միջով, վորը Ալլան սեղմում եր պտուտակին։ Այդտեղից հոսանքն անցավ սետաքսափալ լարերի մեջ ու սկսեց պտտվել կոճերի շուրջը։

Իսկ կոճերի ներսում, կարծես բոժոժի մեջ, քնած եր մի լերկաթյա վորդիկ։ Յերբ ելեկտրական հոսանքը փաթաթվում եր կոճերի վրա, լերկաթյա վորդի մեջ արթնացավ Մագնիսալին Ուլժը։

Մագնիսալին Ուլժը ձգեց զսպանակիկը դեպի իրեն ու ի լեց այն Ալլալի ձեռքից։


Իսկ զսպանակի վրա ամբայրած եր զարկանը։ Զարկանը խփեց գավաթին։ Գավաթը զըրնգաց։


Քայց այդտեղ զսպանակիկը հեռացավ պտուտակիկից,
հոսանքն ալլես վոչ մի կերպ չեր կարող ընկնել կոճե-
քի մեջ:

Առանց հոսանքի լերկաթւա վորդիկը թուլացավ, և
համառ զսպանակիկը նորից սեղմւեց պտուտակին: Յեվ
նորից վազեց անխոնջ հոսանքը: Յեվ նորից գարկանը
թրըխկացրեց գավաթին:

Դրա հետ շրխկոյով թռավ կայծը, վոր նմանում էր
կայծակի:


Ա՛յ թե վոնց եր աշխատում գանդը: Յերեխաները
չնդակի պես ներքև գլորվեցին:





Ճանապարհորդութունը վերջացավ: Խաղը նույնպես:
Փոքրիկ ճանապարհորդները վերադարձան հատակի
վրա և նորից դարձան սովորական լեռնիսաներ:

Յերեկոյան պիտներնեքի տեխնիկական խմբակում
Գորան ու Ալան զեկուցում ելին տալիս իրենց արկած-
ների մասին: Նրանք դրին սեղանի վրա կոճակը, մարտ-
կոցիկը, գանգը: Նրանք միացրին դրանք լալերով: Նը-
րանք բացատրեցին, թե ինչպես ե գործում գանգը:
— Հասպա, կրկնեցեք, — ասաց Գորան իր ընկերներին:





Պատ. խմբագիր՝ Եղ. Չոփուրյան
ՏԵԽ խմբագիր՝ Ա. Խոզազերյան
Արագրիչ՝ Ռ. Նեանյան

Գլավիտի լեզուր Կ-4467, Հրատ. 3883
Գառվեր 1136, Տիրած 2000
Պետրատի տպարան, Յերևան, 11 Կնունյանցի,

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003700

70

ԳԻՆԸ 50 Կ.

094

A $\frac{\text{II}}{23344}$



Ռ. ԲՍԼԱՏՈՎ, Լ. ԿԱՏՏԻԼՅ, Ս. ԼՈՍԱՏԻՆ
Յ ծրանԵ ԸզԻՆՅ-ԸզԻՆՅ
ԳԻՅ Արմ. ՏՏՐ, ԵրԵՎԱՆ, 1937